# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025 թվականի N 213-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2025** ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ **22-**Ի **117-**Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի << ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎԻԿ ԱՐՇԱՎԻՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 117-ը շարադրել նոր խմբագրությամբ՝

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎԻԿ ԱՐՇԱՎԻՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով , հիմք ընդունելով Հովիկ Վարդանյանի դիմումը /մտից՝ 21.03.2025թ. թիվ 3055/, 21.01.2006թ, թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի 03-003-0296-0171 ծածկագիրը կրող 0,58746 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Հովիկ Արշավիրի Վարդանյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Մասիս քաղաքում գտնվող 03-003-0296-0171 և 03-003-0296-0541 ծածկագրերով համապատասխանաբար 0,58746 հա և 0.03496 հա արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը /իրավունքի պետական գրանցման վկայականներ N 27052025-03-0085,N16042025-03-0093/, թույլատրել ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում, գնման նախապատվության իրավունքով, ընդհանուր 7500000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օտարել Հովիկ Արշավիրի Վարդանյանին:

| Կողմ -16 | Դեմ -4 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ | ԲԱԲԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ | |
| ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ | |
| ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ | ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ | |

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ